# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 26-Ի N 1197-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

N -------Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 26-Ի N 1197-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի օգոստոսի 26-ի «Աշխատանքային խումբ ստեղծելու, դրա կազմը և գործունեության ու գործառույթների իրականացման կարգը հաստատելու մասին» N 1197-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) 2-րդ կետում «մինչև յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա 20-ը» բառերը փոխարինել «նիստը գումարելուց հետո տաս աշխատանքային օրվա ընթացքում» բառերով
2. Որոշման N 2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 8-րդ կետում «երեք ամիսը մեկ անգամ» բառերը փոխարինել «վեց ամիսը մեկ անգամ» բառերով,

2) 28-րդ կետում «յուրաքանչյուր ամսվա մինչև 20-ը» բառերը փոխարինել «նիստը գումարելուց հետո տաս աշխատանքային օրվա ընթացքում» բառերով,

3) 29-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«Վեց ամիսը մեկ անգամ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կայքում հրապարակվում է խմբի գործունեության վերաբերյալ հաշվետվություն՝ ապահովելով հրապարակման ոչ ենթակա տվյալների գաղտնիությունը»։